## ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԼՈՐԻՍՏՈՆ ՍՔԵՅՖ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Ձերդ Սրբություն.

Ինձ համար ճշմարիտ ուրախություն եղավ իմանալ Ձերդ Ս. Օծության մարտ 12 թվակիր կոնդակի մասին, որ հրապարակվել է Ամերիկայում:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցը շատ հայտնի և սիրված դեմք էր այստեղ իբրև առաջնորդ Իր ծառայության շրջանին: Մենք, Եպիսկոպոսական եկեղեցու անդամներս, Իր մեջ գտել էինք սրտագին մի բարեկամի և գործակցի՝ մեր Տիրոջ հավիտենական թագավորությունը մեր մեջ հաստատելու գործում, և Ձեզ հետ միասին փառք ենք տալիս Աստծուն՝ Նրա տված այդ մեծ օրինակի համար:

Նա նույնպես իմ սերտ բարեկամն էր և ես միշտ կհիշեմ այն մեծ շնորհը, որ Նա բերեց ներկա լինելով Իր օրհնությունը տալու իմ ամուսնության, 1939 թվականին:

Հաճեցեք վստահ լինել, որ մենք Ձեզ հետ, նոյեմբերի 10-ին, պիտի հիշատակենք Նրա կյանքն ու գործունեությունը և փառք պիտի տանք մեր երկնավոր Հորը՝ մեր մեջ Նրա կատարած աշխատանքի համար:

Լավագույն բոլոր մաղթանքներով և աղոթքներով, Ձերդ Ս. Օծության առողջության և բարօրության և Ձեր մեծ եկեղեցու և ժողովրդի բարգավաճման համար,

Մնամ հավատարմությամբ ի Քրիստոս՝

**ԼՈՐԻՍՏՈՆ ԼԻՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ**
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ
24 մայիսի 1962 թ.

ՊԱ-262